

# ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ջարմանայի ոչինչ կայ, որ բազում բարեբարոյ մարդիկ հազիւ մէկ անգամ կրնան ուղղել, իսկ մէկ չար բաւական է շատեր մոլորեցնելու համար: Քանզի շատ առողջներ ալ մէկ բորոտը մաքրել չեն կրնար, բայց մէկ բորոտ կարող է աստահարել բոլորը:

Շատերը, չարերու ընկերակից ըլլալով ոչ միայն յետին չքաւորութեան հասան՝ հայրական ժառանգութիւնը վատնելով, այլ ամօթխածութեան ու պարկեշտութեան անգին գանձը վատնեցին եւ անարգ անուն ձեռք բերելով՝ խայտառակուեցան: Ուստի ընկերներու ընտրութիւնը մեծ զգուշութիւն կը պահանջէ:

Չարասէր մարդիկ շողոքորթ ու կեղծ բարքով արտաքուստ բարի կ'երեւին, բայց իբրեւ գեղեցկամորթ օձ՝ սրտի մէջը մահուան թոյն կը թաքցնեն եւ անսիրտ երիտասարդները խաբելով՝ կը ձգտին տեսակ-տեսակ մոլորութիւններու մէջ: Ուստի եթէ երիտասարդը մէկու մը հետ բարեկամանալ կ'ուզէ, թող քննէ անոր ընկերը: Եթէ բարեհամբաւ են, թող ինքն ալ անոնց ընկերակցի, իսկ եթէ վատանուն են, թող ետ քաշուի, որպէսզի ինքն ալ վատանուն չդառնայ, որովհետեւ ըստ առածի՝ «մարդ իր ընկերով կը ճանչցուի»:

Աւելի լաւ է բարի ընկերներու հետ վշտանալ կռուիլ, քան թէ չար ընկերներու հետ հաճելի ու հեշտայի վայելքներ ըմբռնել: Առաջինը մահէն փրկող է, իսկ երկրորդը՝ մարմինին ու հոգիին անողորմ դահիճ:

**ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ**

## ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈԳԻՆԵՐԸ, ԴԵԻՆԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵԻՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԵՆ

### ԽԱՂԱԹՈՒՂԹՈՎ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՈՐ ՀԵՏԵԱՆՔՆԵՐԸ

Մահուան մասին մտածած ատեն մտահոգութիւն մը կը տանջէ զիս: Համոզուած չեմ որ պիտի փրկուիմ: Յաճախ ինքզինքս հալածուած եւ հիւժուած կը զգամ: Եկեղեցի երթալը, Աստուածաշունչ կարդալը, աղօթք ընելը պարտադիր դարձեր են, բայց ներքին անյաղթահարելի պահանջ չեն: Որքան՝ կ'ուզէի ամբողջական փրկութիւն գտնել, բայց ուժ չունիմ:

Յստակ է, որոշ ուժ մը կայ, որ կը կապէ եւ դարձալ կ'ուզէ մարդը ետ քաշել: Բայց, փառք Աստուծոյ, Յիսուս կը փշրէ բոլոր կապանքները:

Պերլինի մերձակայ շրջաններէն մէկուն մէջ բնակող աղջիկ մը կը գրէ. «Պէտք է խոստովանիմ, որ զիս Աստուծոյ կողմը քաշողը ո՛չ թէ սէրն է, այլ՝ վախը: Մարմինս կը սարսուայ, երբ կը մտածեմ Անոր դատաստանին մասին: Երբ անգամ մը կարդացի՝ «Մարտափելի բան է Կենդանի Աստուծոյ ձեռք իյնալը» (Եբր 10.35), հասկցայ՝ որ այդ ճշմարտութիւնը ինծի ուղղուած է: Կը կարծեմ որ Աստուծոյ չհաւատացողը աւելի լաւ վիճակի մէջ կը գտնուի, քան ես: Անգամ մը նոյնիսկ գուշակուհիի մը դիմեցի, գիտնալու համար՝ թէ արդեօք պիտի չհիւանդանամ, եւ ե՞րբ կրնամ ամբողջապէս նուիրուիլ Փրկչին, քանի որ հոգիս հանգստութիւն կ'ուզէ... **Շարունակելի**



# ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԵԴ ԽՄ ՈՏԲԵՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս., 119.105)

Ե. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ՝ 12 ՕԳՈՍՏՈՍ, 2012 ԹԻՒ 33

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻՆՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 2.1-7**

Այդ օրերուն Օգոստոս կայսր հրամանագիր հանեց՝ իր կայսրութեան սահմաններուն մէջ գտնուող բոլոր բնակիչներուն

մարդահամարը կատարելու: Այս առաջին մարդահամարը տեղի ունեցաւ Սուրիոյ կառավարիչ Կիրենիոսի օրերուն: Ամէն մարդ իր ծննդավայրը կ'երթար իր անունը արձանագրել տալու համար: Յովսէփ Դաւիթի սերունդէն ըլլալուն համար, Դաւիթի Նազարէթ քաղաքէն ելաւ եւ իր անունը արձանագրել տալու համար գնաց Հրէաստանի Բեթղեհէմ քաղաքը՝ Դաւիթ քաղաքի ծննդավայրը: Իրեն կ'ընկերանար իր նշանածը՝ Մարիամ, որ յղի էր:

Բեթղեհէմի մէջ, Մարիամի ծննդաբերութեան ժամանակը հասաւ եւ ծնաւ իր անդրանիկ գաւակը, որ փաթեց խանձարուրով եւ դրաւ մսուրի մը մէջ, որովհետեւ պանդոկին մէջ իրենց համար տեղ չկար:

### ԱՌԱԿԱՅ (Գ. 23, 19-25)

Որդեա՛կ իմ, լսէ՛ ու իմաստուն եղի՛ր եւ քու սիրտդ դէպի ուղիղ ճամբան շտկէ՛: Մի՛ ընկերանար գինեմոլներուն ու իրենց մարմինը մաշեցնողներուն, վասն զի գինեմոլն ու շուայր աղքատ կ'ըլլան եւ շատ քունը՝ պատուած հանդերձներ կը հազցնէ:

Հնազանդէ՛ մօրդ, որ քեզ ծներ է, ու մի՛ անարգեր քու հայրդ, երբ կը ծերանայ: Ճշմարտութիւնը ծախու ա՛ռ ու գանիկա մի՛ ծախեր: Նմանապէս՝ իմաստութիւնը, խրատն ու հանճարը:

Արդարին հայրը շատ պիտի ցնծայ եւ իմաստուն գաւակ ծնանողը անոր համար պիտի ուրախանայ: Թող քու հայրդ ու մայրդ քու վրադ ուրախանան ու քեզ ծնանողը թող ցնծայ:

# ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

## ՎԵՐԱՓՈԽՈՒՄ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ



### ՇԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ ՕՐՅ. ԴՁ (գրաբար)

«Վերափոխում» բառը, գրաբար լեզուով նկարի առնուած, կը նշանակէ վեր, դէպի երկինք փոխադրելի: Իսկապէս ալ, վերափոխումը Սուրբ Աստուածածնի մահուան յիշարակումն է, որ կը կարարուի Օգոստոս 15-ին մերձակայ, այսինքն Օգոստոս 12 - 18 հանդիպող Կիրակին:

Վերափոխումը Նայասարանայց եկեղեցւոյ հինգ քաղաւարներէն մէկն է: Այս քաղաքին առթիւ մեր եկեղեցին կը նշէ «Քրիստոսի գալուստն ի փոխումն մօրն եւ կուսի»: Այլ խօսքով, քաղաքը կ'ակնարկէ այն պարահարին, ըստ որուն Քրիստոս ինք իջաւ իր մօր մահուան առթիւ եւ զինք փոխադրեց երկինք:

#### ՎԵՐԱՓՈՒՄԻ ԱՄԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸՆ՝ ԽԱՂՈՐՈՐՅԱԵՔ

«Հնաւանդ, գեղեցիկ, այլեւ բարոյայից սովորութիւնն էր հայ ժողովուրդի մէջ, որ երբ բերքը կը հասնի, երախայրիքը հասունցած առաջին եւ լաւագոյն բաժինը իբրեւ շնորհակալիք եւ առ ի երախտագիտութիւն Աստուծոյ կը տրուի: Եթէ նախաբրիատոնէական շրջանին այս բարոյայից սովորութիւնը կար եւ ան կը մատուցուէր աստուածներուն, ապա պահուեցաւ գաղափարը եւ շարունակուեցաւ այդ ընծայաբերումը մէկ տարբերութեամբ՝ այս անգամ եկեղեցիին եւ անոր միջոցաւ ուր որ անհրաժեշտութիւն է:

Խաղողը բոլոր պտուղներուն մէջ նախապատիւ է, որովհետեւ անկէ կը պատրաստուի գինին, որ Ս. Պատարագի, Ս. Հաղորդութեան, Ս. Պսակի խորհուրդներուն մէջ խորհրդանշական գործածութեան կը դրուի»:

Այսօր ժողովեալ սրբոցն ի միասին երանելի առաքեալն եւ սուրբ կուսանքն ջահագետուի պայծառացեալ լուցանէին զլապտերս իւրեանց. եւ միաձայնեալ ասէին, օրհնեալ եւ ամենօրհնեալ ի կանայս:

Այսօր դնելով ըզուրբ կոյսն առ դրանըն գերեզմանին, սպասէին եւ ակն ունէին տեսնել իսկ ինքնին գոյով, գեր ի վերոյ տեսեալ զարարիչն եկեալ բազում հրեշտակօք. եւ նոցա միաձայնեալ ասէին, օրհնեալ եւ ամենօրհնեալ ի կանայս:

Այսօր տեսեալ ըզուրբ կոյսըն թուցեալ յօդս, եւ ամպեղէն կառօքն ի վեր համբարձեալ յերկինս. մըտանելով յերկնային խորանսն ընդ իմաստուն կուսանսն. եւ նոցա միաձայնեալ ասէին, օրհնեալ եւ...

#### (Աշխարհաբար)

Այսօր միասին հաւաքուած սուրբերդ՝ երանելի առաքեալներն ու սուրբ կոյսերը, լուսաւոր վզեստներով պայծառացած, իրենց լապտերները կը վառեն եւ միաձայն կ'ըսեն՝ օրհնեալ եւ դուն կիններուն մէջ ամենօրհնեալ:

Այսօր սուրբ կոյսը գերեզմանին առջեւ դնելով կը սպասէին եւ կ'ակնկալէին ինքնին տիրոջ հոն ըլլալը, բայց տեսան որ Արարիչը վերէն կու գար բազում հրեշտակներով. եւ անոնք միաձայն կ'ըսէին՝ օրհնեալ եւ դուն կիններուն մէջ ամենօրհնեալ:

Այսօր տեսան սուրբ կոյսին օդին մէջ թռչիլը եւ ամպեղէն կառքով վեր երկինք համբառնալը եւ երկնային խորաններուն մէջ մտնելը իմաստուն կոյսերուն հետ եւ անոնք միաձայն կ'ըսէին՝ օրհնեալ եւ դուն կիններուն մէջ ամենօրհնեալ:

# ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

## ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

### ԵՐԴՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Երբեմն բոլորս ալ անիմաստ պատճառներով երդում կ'ընենք առանց անդրադառնալու թէ երդումը մեղք է:

Քրիստոնեան պէտք չէ սուտ կամ իրաւ երդնու: Աստուած թէեւ Մովսէսի օրէնքներով տգէտ եւ անկատար մարդոց այն ժամանակ ստրկեցուց, թէ «Փուն բաներու համար Տիրոջ անունը բերանդ մի՛ առնե» (Ելք 20.7) այսինքն՝ Տէրդ որ թագաւորդ, դատաւորդ ու քննիչդ է, Արարիչիդ անունը սուտ կուտփերուն վրայ մի՛ կոչեք եւ մի՛ սուտ երդնուր, այլ քու Տէր Աստուծոյդ անունով նշմարիտ երդում ըրէ: Ասիկա ըսաւ որպէսզի կուտփերէն եւ դարձնէր մանկական ու յիմար միտքը անոնց, որոնք նշմարիտ Աստուածը կը փանջնային:

Իսկ մեր յոյսը՝ Քրիստոս ամբողջութեամբ արգիլեց երդնուլը եւ ըսաւ. «Մի՛ երդնուր երկինքի վրայ՝ որ Աստուծոյ աթոռն է, ո՛չ երկրի վրայ՝ որ պատուանդանն է Անոր ոտփերուն, ո՛չ Երուսաղէմի վրայ՝ որ քաղաքն է մեծ Արքային, եւ ո՛չ ալ քու գլխուդ վրայ, որովհետեւ չես կրնար մագ մ'իսկ սպիտակ կամ թուխ ընել» (Մատ. 5.34):

Մինչ հիմա կը տեսնենք որ աշխարհը լեցուած է երդումով, եւ ամէն փոքր բանի համար Աստուծոյ ահեղ եւ սուկալի անունը մեր բերանը կ'առնենք:

Երեւ տեսակ երդում կայ. առաջինը վկայական կը կոչուի, երբ կ'ըսենք. – Աստուած վկայ է. ասիկա չափազանց սուկալի է, որովհետեւ երկնի եւ երկրի Արարիչին անունը, սուտ բաներու համար վկայ կը կոչեն, մինչդեռ գիտենք որ թագաւորի կամ իշխանի մը անունը յիշողն իսկ մահապարտ է:

Երկրորդ ուրացական երդումն է...

Շարունակելի

# ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԳԱՏՈՒ

## ԽԱՂԱՂՈՒԹԵԱՄԲ ԱՊՐԻԼ

Որքան կարելի է ձեզի, ամէն մարդոց հետ խաղաղութիւն ունեցէք: (Յոովմ. 12.18):

Մարդ մը, որ հարցեր կ'ունենար իր դրացիին հետ ջանաց խաղաղութեամբ լուծել կարգ մը հարցերը: Համոզուելով, որ կարելի պիտի ըլլար սիրով վերջ տալ ծագած դժուարութեանց, ան դիմեց օրէնքին: Բացարկելու համար իր տեսակէտը, ան ըսաւ. «Լուրջ ջանք ըրի գործադրելու առաջնալին պատուէրը՝ խաղաղութիւն ունենալու մարդոց հետ, բայց անօգուտ: Շնորհակալ եմ Աստուծոյս անոր համար՝ որ ան չէ ըսած թէ խաղաղութեամբ պէտք է ապրիլ բոլոր մարդոց հետ կեանքի բոլոր պարագաներուն տակ: Աստուած այդպէս չ'ըսեր որովհետեւ գիտէ՝ թէ կարգ մը մարդոց հետ խաղաղութեամբ ապրիլ կարելի չէ»:

Դժբախտաբար շատեր իրենց կարելին ի գործ չեն դնել խաղաղութեամբ ապրելու համար: Տղայ մը հարցուց իր հօրը, թէ ինչպէ՞ս կը սկսին պատերազմները եւ հայրը այսպէս պատասխանեց. «Առաջին աշխարհամարտը սկսաւ երբ Գերմանիա գրաւեց Պելճիստանը»: Ճիշդ այդ պահուն մայրը միջամտեց եւ ըսաւ. «Հանիս նշմարութիւնը յայտնէ: Պատերազմը սկսաւ մարդու մը սպանութեան պատճառով»: Ամուսինը բարկացաւ եւ պոռաց. «Ո՞վ կը պատասխանէ տղուն հարցումին. դո՞ւն թէ ես»: Կինն ալ բարկացաւ եւ դուրը ուժգին զարնելով դուրս ելաւ: Տղան ըսաւ. «Հայր, հիմա գիտեմ, թէ պատերազմները ինչպէ՞ս կը սկսին»:

Արդեօք դուն բարկութեամբ կը հակադրես, թէ մշակած եւ խաղաղութեամբ ապրելու սովորութիւնը: Յիսուս աղօթեց իր թշնամիներուն համար: Դուն ալ կ'աղօթե՞ս: Փորձենք խաղաղութեամբ ապրիլ բոլորին հետ:

ԵՐԳ ԵՐԳՈՑ ԳԻՐՔԵՆ  
4.9-15, 8.14

Գրաւեցիր սիրտս, հոգեա՛կ իմ հարս, սիրտս գրաւեցիր մէկ նա-յուածքով, վզիդ շնորհալի մէկ շար-ժումով:

Ի՛նչ զգլխիչ է սերդ, հոգեա՛կ իմ հարս, որքա՛ն աւելի քաղցր է սերդ՝ գինիէն, եւ զգեստներուդ անոյշ բուրմունքը՝ բոլոր խունկերէն:

Շրթներէդ մեղր կը կաթի, հոգեա՛կ իմ հարս, մեղր եւ կաթ կը ծորի լեզուէդ. եւ զգեստներուդ անոյշ բուրմունքը նման է կնդրուկի բոյրին:

Փակուած պարտեզ է իմ հարս հոգեակս, փակուած պարտեզ, կնքուած աղբիւր:

Նռնենիներու դրախտ մըն ես դուն ամենէն ընտիր եւ բուրում-նաւետ տունկերով՝ հինայ ու նար-դոս, նարդոս ու քրքում, խնկեղէզ ու կինամոն, եւ խնկաբեր բոլոր ծա-ռերով՝ զըմուռս ու հալուէ, եւ ընտիր բոլոր խնկենիները:

Բուրաստաններու աղբիւր ես. կեանքի ջուրին ակը, որ Լիբանանէն կը բղխի:

Տէրը ստեղծեց եւ հաստատեց քեզ, մօրդ արգանդէն քեզ պատրաս-տեց, ո՛վ կիներու գեղեցկագոյնը. մայրդ անթերի ծնաւ քեզ:

*Շարունակել Աստուածաշունչէն*

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ  
ԳԱՐԱՏԱՑԻՆԵՐՈՒՆ  
3.29- -4.7

Ապա ուրեմն, եթէ Քրիստոսի կը պատկանիք՝ կը նշանակէ թէ Աբ-րահամի զաւակներ էք եւ պիտի ժառանգէք ինչ որ Աստուած անոր խոստացաւ:

Բայց գիտցէք նաեւ, թէ ժա-ռանգորդ մը թէւ ամբողջ ժա-ռանգութեան իսկական տէրն է, բայց որքան ատեն որ անիկա անչափահաս է՝ տարբերութիւն չունի ծառայէ մը, քանի խնամա-կալներու եւ հոգաբարձուներու ենթակայ է, մինչեւ հասնի իր հօրը որոշած ժամանակակէտը: Նոյնն է մեր ալ պարագան: Որքան ատեն որ հոգեւորապէս անչափահաս էինք՝ բնութեան ոյժերուն կ'են-թարկուէինք ու կը ծառայէինք: Բայց հիմա յարմար ժամանակը հասած համարելով, Աստուած աշխարհ ղրկեց իր Որդին որ մարդկային մօրմէ մը ծնաւ եւ Սովսիսական Օրէնքին տակ ապ-րեցաւ, որպէսզի մեզ օրէնքին գերութենէն փրկէ եւ Աստուծոյ որդիներ դարձնէ: Արդ, որովհե-տեւ իր որդիներն ենք՝ Աստուած մեր սիրտերուն մէջ ղրկեց իր Որդիին Հոգին, որով զԱստուած «Հայր» կը կոչենք: Ուստի այլեւս ծառայ չէք, այլ որդի. եւ քանի որդի էք՝ Աստուծոյ խոստումը պիտի ժառանգէք:

*ՀԱՐՈՒՆԱԿԵԼ  
ԸՆԹԵՐՑՄՆՈՒԹԻՒՆԸ  
ՍՍՏՈՒՄԾԱՇՈՒՄԵՂԵՆ:*